

ԾԱՆՈՒՅՈՒՄՆ.

Առ 22 Մարտի տարւոյս Ճեմարանիս Հանգուցեալ ուսուցիչ Վարդան Արովանի որբերի անուէնով ստացուած նուէրների գումարն էր ընդամենն 1672 ուրբլի 77 կոպէկ: Առ 28 ապրիլի ստացուեցաւ նոր նուէրներ. ա) ի՛նեսարարիոյ և Սոր-Սախիճեանի թեմի կափարիչ Բարձր. Յուսիկ վարդապետն ուղարկեց առանձին ցուցակով Հանդանակաճ նրուէրներ 200 ուրբլի. Բ) Արցախու թեմի կառավարիչ Բարձր. Կարեզին վարդապետ Սաթուհեանն ուղարկեց առանձին ցուցակով Հանդանակաճ նուէրներ 306 ուրբլի. Գ) Մեծ. տիկին Աննա Աթամապետն իւր նորոգ Հանգուցեալ ամուսին Հանգուցեալ Միրզա Աթամապետնցի յիշատակի համար Բագուից ուղարկեց նուէր 500 ուրբլի և Կ) Վեհափառ Հայրապետի Դիւանից ստացուեցաւ պ. Արզար Յովհաննիսեանի շնորհիւ Թիֆլիսում Հանդանակաճ գումար 250 ուրբլի: Ընդամենը մարտի 22-ից մինչև ապրիլի 28 ստացուած նուէրների գումարն է 1256 ուրբլի որ աւելցանելով մինչ ցայն ստացուած գումարի վերայ՝ յանուն Վարդան Արովանի որբերի ստացուած բոլոր նուէրների գումարն առ 28 ապրիլի տարւոյս կլինի 2428 ուրբլի 77 կոպէ:

Տեսուչ Ճեմարանի՝

Կ. ԿՈՍՏԱՆԵԱՆ.

ԱԶԳԹԳՈՒՑ • ԱՐԱՐԱՏ • ԱՄՍԱԳՐԻ ԽՐԹԱԳՐՈՒԹԵԱՆ.

Քանի որ անուրանալի փաստ է հնազեանների համար, որ առանց ի մտայ ծանօթ լինելու հաւաքուած և դանուած հնութիւնների պեղումների տեղին և գանոցի տեղեկութիւններին՝ դժուար է ճիշտ եղբակացութիւն անել հնութիւնների վերաբերութեամբ. և քանի որ մենք մեր հաւաքած հնութիւնների մի փոքրիկ մասն Ազգիս Վեհափառ Կաթողիկոսին մատուցանելու բաղձն ունեցանք՝ լաւ հասկանալով, որ տեղական հնութիւններն աւելի ցանկալի է Մ. Էջմիածնի թանգարանում ամփոփել՝ քան թոյլ տալ հեռու տեղեր տանելն սոյն երկրտողոփս անհրաժեշտ ենք համարում զենել մեր հաւաքած հնութիւնների անուաններն հաւաքման և պատահամբ պեղման տեղերն և մեր ամփոփ տեղեկութիւններն, որպէս զի մեր հաւաքած հնութիւններն ուսումնասիրողը կարողանայ

աւելի ճիշտ եղբակացութեան հասնել դոցա վերաբերութեամբ:

1. Անորջընդեղեղան դար.

Երկու հարիւր կտորից և քսան տեսակից աւելի քարացած կենդանական և բուսական մարմինների նախնական տեսակներ՝ կրիայ\* օձեր, խխոււջներ և բոյսեր, որոնք հանուած են Վայոց Չոր-ի սահմանների մօտ գտնուած՝ Արմաշու Օղբինս Ազազեկի Մարտիրոս Մալիշկաւ Իթղւան և Փաշալու գիւղերի կաւային շերտերով բլուրներից, որոնք մօտ լինելով Վայիք թափայ, հանգած լեռան պարզ ցոյց են տալիս, որ այդ տեղ՝ շնորհիւ հրարուղիով՝ ցամաք է գոյացել, պատճառ դառնալով ջրային կենդանիների քարանալուն:

2. Բրօնզեան դար.

Մի հատ հին հիթանոսական բրօնզեայ կոթաւոր եռոտանի երկատեղն ճրագ՝ երկայն խողովակներով և զրշաձև հատած ծայրերով՝ (en taille) Գորաղիզ գիւղի մօտ եղած մի բլրակի վերայ, որն ամփոփուած լինելով բարձր սիւնաձև պատուանդանի վերայ՝ գտնուել է տասն արշինաչափ խորութեան մէջ: Բրօնզեայ վղնոց, միապաղաղ Բաղկեզոնիկ քարից (Agate calcédonique) տերեւադրոյժ՝ քանդակով մատանի, զանազան յուլունքների, աէք, վեց կտոր անյայտ գործիքների, ինչպէս և բրօնզի կտորներ և մի հատ բրօնզեայ դրամ՝ աստղանշան և գուցէ՝ ասորական տաւերով:

3. Նախաքրիստոնէական դարերից.

Վեց հատ կաւեայ անօթներ՝ կարմիր և սև գոյներով նկարուած, որոնցից մէկը շատ մեծ (սուրահի ձևով, դաւաձև), երկուսն բոլորշի խոր գաւաթաձև, մէկը ճոռաւոր դաւաձև, միւս երկուսն կանթեղաձև, որոնցից ունկաւոր գաւաթաձևն դանուած է կռապաշտական զերեզմաններից կարմիր վանք կոչուող մենաստանում, որն նախօրօք՝ մեր կարծիքով՝ Արծրունեաց դղեակն լինելով, ինչպէս ցոյց է տալիս շրջապարսպի ձևն և աւազ դրան ճակատի զինադրօշն (արծիւ՝ մաղիլները խրած ոչխարի մարմնի մէջ). շատ հաւանական է, որ դեռ շատ հնութիւններ է պարունակում իւր մէջ այդ վանք—դղեակն իւր շրջակայքով, որին իբր ապացոյց կարող է լինել այն, որ Մոսկուայի Հնագիտական Ընկերութեան անդամ պ. Փեօդորովն գտել է այդ տեղից կաւեայ սր-

\* Պէտք է նշաղորել որ քարացած խոշոր տեսակե ծովային-աստղ է: Ծ. Խ.